ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2015 թվականի N 345-Ա

2000 ԹՎԱԿԱՆԻՆ ԾՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՀՐԱԶԴԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ԿՑԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի դրույթների, 2000 թվականին ծնված և ավագ տարիքի կցագրում չանցած արական սեռի քաղաքացիներին զորակոչային տեղամասում կցագրման աշխատանքները կազմակերպելու և անցկացնելու համար՝ **որոշում եմ.**

1. 2016 թվականի ընթացքում՝ 2000 թվականին ծնված, 16 տարին լրացող և ավագ տարիքի կցագրում չանցած արական սեռի քաղաքացիների կցագրումն անցկացնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Հրազդանի զինվորական կոմիսարիատում:

2. Կցագրում անցկացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Հանձնաժողովի նախագահ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Հրազդանի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Ա.Ասատրյան,

2) Հանձնաժողովի անդամներ՝ բժիշկ-մասնագետներ՝

ա. թերապևտ	Ս.Սիմոնյան,
բ. վիրաբույժ	Ա.Ղազարյան,
գ. ակնաբույժ	Ն.Գրիգորյան,
դ. քիթ-կոկորդ-ականջ	Հ.Մկրտչյան,
ե. նյարդաբան	Ն.Գալստյան,
զ. սրտաբան	Հ.Կարապետյան
է. հոգեբույժ	Լ.Համբարձումյան,
ը. մաշկավեներաբան	Ս.Խաչատրյան,
թ. բուժքույր	Ն.Գրիգորյան:

3. Բժշկական քննություններ անցկացնող մասնագետների վարձատրությունը կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի N 483-Ն որոշման պահանջների համաձայն:

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բժշկական կենտրոններում նախազորակոչային և զորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների բժշկական

փորձաքննություններն իրականացնել համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 10-ի N 748-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի:

5. <<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ռ.Սահակյանին՝

1) ժամանակին կազմակերպել այն պատանիների բուժումը, որոնք հանձնաժողովի կողմից ուղարկվել են բուժման,

2) ապահովել հանձնաժողովին անհրաժեշտ գույքով, սարքավորումներով և դեղորայքով:

6. Կցագրումն անցկացնող հանձնաժողովի նախագահին՝ կցագրման ավարտից հետո վերլուծել բոլոր հիվանդ ճանաչված պատանիների հիվանդության պատճառները, սահմանել խիստ հսկողություն ժամանակին բուժման ենթարկելու համար:

7. Առաջարկել համայնքների ղեկավարներին և հանձնարարել ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Հրազդանի զինվորական կոմիսարիատի ժամանակացույցի, ապահովել պատանիների պարտադիր ներկայությունը զինվորական կոմիսարիատ:

8. Սույն որոշմամբ սահմանված աշխատանքների կազմակերպումը և կատարումը դնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Հրազդանի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Ա.Ասատրյանի վրա:

9. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Հ.Ալեքսանյանի վրա:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2015 թվականի դեկտեմբերի 18
ք. Հրազդան